



Վ. ԳԱՐԵՒՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ԳՈՐԾԸ

ՆԿԱՐՆԵՐ Ս. ԳԻՆՅԻ

891.715
Գ-36

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ԳՐՈՒ“—1937

891.71 L

4-36

Այ

Վ. ԳԱՐԵՒՄ

30 MAY 2011

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ ԳՈՐԾԸ

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

Զ Հ Օ Տ
1010/10614



Ազով-Սեվոսկայ ՅԵՐԿՐՁԻՆ
ՀԱՅԿԱՆ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՅ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1937

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

ԳՈՐԾԸ

Կար-չկար մի կոկոան գորտ: Ճահճում նստած՝ նա մոծակներ
և մժղուկներ եր բռնում: գարնանն ել, իր ընկերների հետ միասին,
բարձր ձայնով կոկում եր: Յեվ այսպես փառավոր կանցկացներ
նա իր ամբողջ կյանքը, յեթե, ի հարկե, արագիլը նրան մի որ կուլ
չտար: Բայց պատահեց մի այսպիսի գեպք:

Մի անգամ մեր գորտը նստել եր ջրից դուրս ցցված ծուռ
կոճղին և զվարճանում եր մանր ու գոլ անձրեխ տակ.

«Այս, այս ի՞նչ հրաշալի խոնավ յեղանակ ե այսոր,—մտածում
եր նա:—Ի՞նչ հիանալի բան ե այս աշխարհում ապրելը»:

Անձրեը մաղում ու թրջում եր նրա փայլուն գույնզգույն
մեջը, կաթիները վազում անցնում եյին նրա փորի տակովն ու
թաթիների վրայով. և զա շատ եր դուր գալիս և հրճվանք պատ-
ճառում նրան. այնքան եր դուր գալիս, վոր նա քիչ եր մնում
կոկոար. բայց լավ վոր զլիի ընկավ չեվոր այժմ արդեն աշուն ե,
իսկ աշնանք գորտերը չեն կոկում. կոկոոցի համար գարուն կա:
Ուստի նա ձայն չհանեց ու շարունակեց իր զվարճանքը:

Հանկարծ ոդում լսվեց շվշվոցի մի ձայն: Բադերի մի տե-
սակը կա. յերբ նրանք թռչում են, նրանց թերեն ոդը ձեղքե-
լով՝ կարծես յերգում են կամ,
ավելի ճիշտը՝ շվշվոցի ձայն են
հանում: Յերբ ձեր զլիավերեալու





բարձր թռչում ե այս բաղերի յերամը, ոդում լսվում ե ֆսյու,
ֆսյու, ֆսյու..., իսկ իրենք բաղերն այնքան բարձր են
թռչում, վոր նույնիսկ չեն ել յերեռում։ Այս անգամ բաղերը,
մի մեծ կիսաշրջան անելով ոդում, ցած իջան ու նստեցին
հենց այն ճահճում, ուր՝ մեր գորտն եր ապրում։

— Դըռու, — ասաց նրանցից մեկը։ Թռչելու դեռ շատ
ճանապարհ ունենք. պետք ե բան ուտել! — Ու գորտն իսկույն
թաք կացավ։ Թեև նա զիտեր, վոր բաղերն իրեն՝ մեծ ու հաստ
կոկոանին չեն ուտի, բայց համենայն դեպս ջրասույզ յեղավ
կոճղի տակ։

Սակայն, միքիչ միտք անելուց հետո, նա սիրտ առավ և
ջրից դուրս հանեց իր՝ դուրս տնկված աչքերով գլուխը. նա շատ
եր հետաքրքրվում, թե ուր են թռչում բաղերը։

— Դըռու, — ասաց մյուս բաղը։ Ցուրան արդեն բռնում ե,
Դե շնուտ դեպի հարավ, դեպի հարավ։

Յեվ բուլոր բաղերն, իբրև հավանության նշան, սկսեցին
բարձրաձայն կռնչալ։

— Տիկին և պարոն բաղեր, — համարձակվեց ասելու գոր-
տը, — ի՞նչ բան ե այդ հարավը, ուր դուք բոլորդ թռչում եք։
Ներեցեք, խնդրեմ, ձեզ անհանգստացնելուս համար։

Յեվ բաղերը շրջապատեցին գորտին։ Նրանց մեջ նախ ցանկություն
առաջ յեկավ ուտել գորտին. բայց նրանցից ամեն մեկն ել հասկանում
եր, վոր այդ գորտը շատ ե մեծ ու նրան կուլ տալ չի լինի։ Ապա նրանք
բոլորը միասին սկսեցին թափ տալ թևերն ու կանչել.

— Հիանալի՛ յե հարավը։ Այնտեղ հիմա տաք ե։ Այնտեղ հըաշալի՛
տաք ճահիճներ կան, ի՞նչ ճիճուներ կան այնտեղ։ Հիանալի՛ յե հարավը։
Նրանք այնպես եյին գոռզոռում, վոր քիչ մնաց գորտին խլացնե-
յին։ Նա հազիվ-հազ կարողացավ համոզել բաղերին, վոր սուս անեն. ապա
խնդրեց նրանցից մեկին, վորն ավելի մեծ ու ավելի խելոք եր յերեռում,
բացատրել իրեն, թե ի՞նչ բան ե հարավը։ Ու յերբ այս բաղը պատմեց
նրան հարավի մասին, գորտը հիացած մնաց. բայց լինելով զգույշ,
վերջում համենայն դեպս հարցրեց.

— Իսկ մժղուկներ ու մոծակներ շատ կան այնտեղ։

— Ո՛, անթիվ, անհամար, — պատասխանեց բաղը։

— Կըր՛ու, — ասաց գորտն ու իսկույն շուռ յեկավ, վոր տեսնի, թե
մոտերքում հո լնկերներից չկմն, վոր կարողանան լսել ու դատապար-
տել նրան, աշնանը կոկոալուն համար։ Նա չեր կարողանում զապել իրեն,
վոր գեթ մի անգամ չկոկոա։



— Ի՞նչ կլինի, վոր ինձ ել ձեր հետ տանեք:

— Ասածդ զարմանալու բան ե,—կանչեց բաղը—Ախր ի՞նչ պես տանենք քեզ: Զեվոր դու թեեր չունես:

— Դուք յերբ եք թռչելու, — հարցրեց գորալ:

— Շուտո՞վ, շուտո՞վ, — գոչեցին բաղերը միաձայն — Այսաեղ ցուրտ ե: Դեպի հարավ, Դեպի հարավ:

— Թույլ տվեք ինձ՝ մի հինգ րոպե մտածեմ, — ասաց գորալ, — իսկույն կվերադառնամ, յես անշուշտ մի լավ բան կհնարեմ:

Աւ գորալ, վոր նորից բարձրացել եր կոճղի վրա, շրջ՝ մի ձգեց իրեն ջուրը և սուզվեց ախղմի մեջ վնրքան կարող եր խորը, վորպեսզի վոչ մի բան չխանգարի իրեն մտածելու:


Հինգ րոպեն անցավ, բաղերը հենց այս ե պատրաստվում եյին թռչելու, յերբ հանկարծ կոճղի մոտ, ջրի միջից, յերևաց մեր գորալը ուրախ մոռնթը:



— Հնարեցի, գտա, — ասաց նա: — Ձեզանից յերկուսն իրենց կտուցով թող վերցնեն մի վոստիկ, իսկ յես կկախվեմ վոստիկի մեջտեղից: Դուք կթոշեք, ինձ ել ձեզ հետ կտանեք: Անհրաժեշտ ե միայն, վոր վնչ դուք կոնչաք, և վնչ ել յես կոկուամ. այն ժամանակ ամեն բան հաջող կանցնի:

Բաղերի համար շատ ել զբավիչ բան չեր, առանց ձայն հանելու, թեկուզ մի թեթև կորտ յերեք հազար վերստ տանելը, սակայն գորալ հնարագիտությունն այնքան հրճվանք պատճառեց բաղերին, վոր միաբերան համաձայնեցին տանել նրան իրենց հետ:

Բագերը վորոշեցին ճանապարհին յերկու ժամը մի անգամ վոլուսեփոխ լինել: Յեվ վորովհետեւ, ինչպես հանելուկումն ասված ե, բաղերի թիվս այնքան եր, դարձյալ այնքան, կես այնքան, և բառդդ այնքան, իսկ գորալը միայն մի հատ եր, ապա ուրեմն նրան տանողները չպետք ե հաճախակի իրալ փոխեցին: Ճարեցին մի լավ






ամուր վոստիկ. յերկու բաղ իրենց կտուցով բռնեցին վոստիկի ծայրերից, իսկ գորտը բերանով կախվեց նրա մեջտեղից: Յեվ այսպես ամբողջ յերամը թռավ դեպի վեր: Նրանք այնքան բարձր ելին թռչում, վոր գորտի շունչն եր կտրվում. բացի դրանից, գորտին տանող բաղերը թռչում ելին անհավասար ու ցնցում ելին վոստիկը: Խեղճ գորտը, թղթե խաղալիքի նման, այս ու այն կողմն եր ճոճվում ոդում և իր ամբողջ ուժով սեղմում եր ծնոտները, վոր վոստիկից չպոկվի ու գետին չդրմփա: Բայց նա շուտով ընտելացավ իր վիճակին և նույնիսկ չօրս կողմն սկսեց զիտեր: Ներքեսում արագությամբ սահում ելին արտեր, մարգագետիններ, գետեր, սարեր, վորոնք, սակայն, գորտը դժվարությունը եր տեսնում, վորովհետեւ այնպես եր կախված վոստիկից, վոր կարողանում եր նայել միայն դեպի հետ, մի քիչ ել դեպի վեր: բայց և այնպես քիչումիչ բան տեսնում եր և ուրախանում ու պարծենում:

— Այ ինչ լավ հնարեցի, — մտածում եր նա ինքն իրեն: Իսկ նրան տանող առջեկի գույզի հետեւից թռչում ելին մյուս բաղերը, կանչում ու գովարանում ելին նրան:

— Զարմանալի՛ խելոք գլուխ ունի մեր գորտը, — ասում ելին նրանք: — Մինչև անգամ բաղերի մեջ ել այդպիսիները քիչ կդանվեն:



Գորտն ուզում եր շնորհակալություն հայտնել բաղերին, բայց զըսպում եր իրեն, վորովհետեւ զիտեր, վոր բերանը բաց անի թե չե, պիտի խկույն սարսափելի բարձրությունից ցած ընկնի. զրա համար ել ավելի պինդ սեղմեց ծնոտները և վճռեց համբերել: Յեվ այսպես նա ամբողջ որը ճոճվում եր նրան տանող բաղերը հենց ոդում ել փոխ-փոխ իրար ելին տալիս բեռը՝ ճարպիկորեն բերանից բերան վերցնելով վոստիկը: Բայց այդ սարսափելի յեր գորտի համար. քանի անգամ նա վախենալուց քիչ եր մնում կոկուար կանու համար պետք եր քաջություն ունենալ, և նա այդ ուներ: Յերեկոյան ամբողջ յերամը կանդ առավ մի ճահճում, իսկ լուսաբացին բաղերը գորտի հետ միասին նորից ճանապարհ ընկան: Բայց այս անգամ մեր ուղևորը, վորպեսզի լավ տեսնի, թե ինչ ե կատարվում ներքեսում, այնպես կախվեց վոստիկից, վոր մեջքը դեպի հետ ուղղված լինի, իսկ փորն ու զլուխը դեպի առաջ: Բաղերը թռչում ելին հնձված արտերի, զեղնած անտառների և գյուղերի վրայով: Ներքեսում յերեսում ելին հացահատիկների առատ դեղերը: այնտեղ լսվում ելին մարդկանց խոսակցության և հաճար կալսող գործիքների ձայները: Մարդկի նայում ելին բաղերի յերամին և՝ նկատելով այնտեղ ինչ-վոր տարորինակ բան՝ ձեռքով ցույց ելին տալիս իրար: Ու մեր գորտը շատ



ուզեց, վոր գետնին ավելի մոտ թռչի,
վորպեսզի թե իրեն ցույց տա մարդկանց և թե լսի՝ ինչ են ասում նրանք
իր մասին։ Հետեւյալ հանգստին նա
ասաց։

— Զի՞ կարելի, վոր այդքան բարձր
չթռչեք. բարձր թռչելիս զլուխս պտույտ
ե գալիս. վախենում եմ, վոր հանկարծ
ուշքս գնա ու ցած ընկնեմ։

Բարեսիրտ բաղերը խոսացան
նրան ավելի ցած թռչել։ Հետեւյալ որը
նրանք այնքան ցած թռան, վոր գետնից
խոսակցության ձայներ հասան նրանց։

— Տեսէք, տեսէք,—աղաղակում եյին յերեխաները մի գյուղում,—բաղերը գորտ
են տանում իրենց հետ։

Գորտը լսեց այդ, ու նրա սիրտն ուրախացավ։

— Տեսէք, տեսէք,—գոռում եյին մի ուրիշ գյուղում հասակավորները—Ա՛, քեզ
հրաշք։

«Նրանք գիտեն արդյոք, վոր այդ իմ հնարքն ե և վոչ թե բաղերինը», մտածում
եր գորտը։

— Տեսէք, տեսէք,—գոռում եյին յերրորդ գյուղում։—Սա ինչ հրաշք ե, տեսնես
ով ե այս խելոք բանի հնարողը։

Այստեղ արդեն մեր գորտը չկարողացավ ինքն իրեն պահել և, մոռանալով ամեն
մի գգուշություն, ինչքան ուժ ուներ՝ ճաշց։



— Յես եմ, յես, յես եմ հնարողը—Ու այդ ճշալուն պես գըլ-
խապտույտ ցած ընկավ։ Բաղերը բարձրաձայն կռնչացին։ Նրանցից
մեկն ուզեց ողի մեջ բռնել իրենց խեղճ ուղեկցին, բայց չկարողա-
ցավ. գորտն՝ իր չորս թաթիկներն
այս ու այն կողմ շարժելով արա-
գորեն մոտենում եր գետնին. բայց
վորովհետեւ բաղերը շատ արագ
եյին թռչում, այդ պատճառով
գորտն ընկավ վոչ թե ուղիղ գեպի
վար, այլ ավելի հեռու. և դա նրա
համար մեծ բախտավորություն եր,
վորովհետեւ չոր գետնին ընկավ, այլ
շրմփալով ընկղմվեց գյուղի ծայրին
գտնված կեղտոտ լճակն մեջ։

Գորտն իսկույն ջրից գուրս
լողաց ու նույն ըոպեյին վոգեսոր-
ված նորից գոչեց վորքան ձայն
ուներ։

— Այդ յես եմ հնարել, յես
բայց չորս կողմը վոչ-վոք
չկար։ Զրի հանկարծակի ճղվյու-
նից այդտեղի բոլոր գորտերը
թաքնվել եյին ջրի տակ։

Յերբ նրանք ջրից գուրս յեկան,
զարմացած նայում եյին նորեկին,

Յել մեր գորտը պատմեց նրանց այն հրաշալի պատմության
մասին, թե ինչպես հնքն իր ամբողջ կյանքում մտածել ե և վեր-
ջապես գտել բաղերով ճանապարհորդելու արտասովոր միջոցը: Նա
պատմեց, վոր ինքն ունեցել ե իր սեփական բաղերը, վորոնք տա-
նում եյին նրան, ուր վոր ինքը կամենար պատմեց, վոր ինքը յե-
ղել ե սքանչելի հարավում, ուր այնքան լավ ե ուր տաք, հրաշալի
ճահճներ կան՝ լի մժղուկներով և ուրիշ ուտելի ճիճուներով:

— Յես յեկա ձեզ մոտ տեսնելու, թե ինչպես եք ապրում
դուք, — ասաց նա, — կմնամ ձեզ մոտ մինչև գարուն, մինչև իմ բա-
ղերի գալը, վորոնց յես առայժմ արձակել եմ:

Բայց բաղերը չվերադարձան:

Նրանք կարծում եյին, թե կոկանը գետնին զարկվելով ջարդ-
վել ե, ու շատ եյին ափսոսում նրան:



Отв. редактор Г. Д. ЛЕВОНЬЯН
Тех. редактор Д. М. ДЖИНИБАЛЯН

Уполномочен № С-660. Сдано в произ-
водство 26 января 1937 г. Подписано в
печать 27 января 1937 г. 62x94/8. Об'ем
2 п. л. Тираж 1100 экз. Заказ № 187.

Типография армянского краевого
издательства „ГРО“. Ростов на Дону
Ворошиловский пр. № 27.



NL0392186

2945

43701

ԳԻԱ 1 ՈՂԿԲ. 75 ԿՈԹ.



В. ГАРШИН
ЛЯГУШКА—
ПУТЕШЕСТВЕННИЦА

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „ГРО“
Ростов н-Д, Ворошиловский, 27